

դանց դասարանն եւ դամբարան մեծապահնչ բարունայեանաց¹,

որ եւ մեծաւ շնորհատուութեամբ սրբոյ տաճարիս այսորիկ՝ Սուրբ Վարդապետն Բառնլ լուսահոգին Աղբակեցի՝ եգիտ շքեպոսթեան արքայնոց շնորհ, եւ հաւաքեաց զաշակերտս յոլովս՝ ուսուցանելով զհին հորոսեալ եւ զնոր քրեալ զպանդն իմաստութիւնն. եւ նորօք զսոյն լուսահոգի տուութիւնս ի մէջ ամենայն ազգիս մերոյ առսփռեաց, որպէս եւ վիպարանէ քաջաջան պատմիչն մեր Առաքել վարդապետն²:

Իսկ ի թւաբերութեանս մերում, ՈՃԾԳԻ, ամին՝ ելից Տէր եւ Ուսուցիչ Հայրս մեր քաղցրաքարոզ եւ համեղաբան զիւրոյ պանդխտութեան ժամանակն, եւ շեաց նորին մարդն ներքին առայն, որում ի մանկութենէ փափագէր. եւ ամիսփեցաւ մաքուր մարմին առն սրբասիրի՝ յիջման աւուր Ղուսաւորչին ի Վիրապն խոր, փառաւորահանդէս եւ յոքնապաղատ աղօթիւք ի դամբարանի, ներ յատակի սոյն Սուրբ Տաճարի, առնութեք վերոյսացեալ Վարդապետիս Բարսղի, ընդ այլ հա-

1 Ամբող, պահեց իր առաջնորդութիւնը, այս բոլոր վանքերուն եւ եկեղեցիներուն վրայ: Կոլտա եւ Շղթայակիր, 1720 Յունիս 25 թուակիր, Պոլսէն Կոնդակ մը զիկեցին (որուն պատճէնը հրատարակեցի Բիւզանդիանի մէջ), յանդիմանելու համար ընդվզողները եւ յորդորելու նորէն միութեան: Բայց «Երեւելի, գերագանց դասատուն»ը Վարդանին վախճանելովը վերջացաւ:

2 Առաքել Վարդապետ Դաւրիժեցի, ժիրդ դարու պատմագիր, իւր պատմութեան Ի. գլուխը նուիրած է Ազրակեցի Բարսեղ Վարդապետի դպրոցին: Բարսեղի գտած արտաքին գիտութիւնն այն է, ինչ որ հիմայ փիլիսոփայութեան արդի ճիւղաւորութեանով: Քերականութիւնը, որ հիմայ փիլիսոփայութեան ճիւղը չկազմեր, այն ատեն ամենէն զլուսւոր մասն էր՝ Տրամաբանութեան հետ: Բարսեղի «Համալսարան»ը հակառակ իր նոր եւ թերի կողմերուն՝ մեծ ազդեցու-